Energy & Water Ombudsman NSW
Free, fair and independent

Դուք խնդիրներ ունե՞ք ձեզ էլեկտրաէներգիա, գազ կամ ջուր մատակարարող ընկերության հետ:

EWON-ը օգնում է **New South Wales**-ում ապրող մարդկանց, ովքեր խնդիրներ ունեն իրենց էլեկտրաէներգիա մատակարարող ընկերության հետ: Մենք կարող ենք նաև օգնել ջուր սպառող որոշ հաճախորդների:

Մենք **Անվճար ենք**

Մենք **Արդար ենք**

Մենք **Անկախ ենք**

Արդյո՞ք դուք.

- Խնդիրներ ունեք հասկանալու ձեր էլեկտրաէներգիայի կամ ջրի վարձավճարը
- Չեք կարողանում ձեր վարձը վճարել
- Խնդիրներ ունեք կապված պարտքի կամ վճարման դժվարությունների հետ
- Մտահոգված եք, որ ձեր մատակարարումը կդադարեցվի
- Դժգոհ եք ձեր ընկերության հաճախորդների ծառայությունից
- Խնդիրներ ունեք բացելու կամ փակելու հաշիվներ
- Ստանում եք լավագույն որակը վճարի դիմաց

Ինչպես մենք կարող ենք օգնել

- Մենք լսում ենք ձեզ և օգնում ենք ձեզ որոշելու, թե ինչ անել
- Եթե թարգմանչի կարիք ունեք, մենք կապահովենք
- Մենք կկազմակերպենք, որ ձեր ընկերության բարձրաստիճան աշխատակիցը կապվի ձեզ հետ
- Մենք կարող ենք օգնել բանակցել արդյունքի համար
- Մենք կարող ենք քննել ձեր բողոքը
- Մենք կարող ենք ձեզ ուղղորդել այլ կազմակերպությունների, եթե մենք չկարողանանք ձեզ օգնել

Օգնություն վարձավճարի համար

- Նախ կապվեք ձեր ընկերության հետ, եթե չեք կարող ժամանակին վճարել՝ ձեր պարտքի մեծացումը կասեցնելու համար
- Մենք կփորձենք ձեզ ավելի շատ ժամանակ տրամադրել ձեր վարձը վճարելու համար
- Մենք կարող ենք օգնել ձեզ համաձայնեցնել վճարման պլան, որպեսզի ժամանակի ընթացքում կարողանաք վճարել ձեր վարձը
- Մենք կարող ենք օգնել ձեզ օգտվել մատչելիության ծրագրերից
- Մենք կարող ենք ձեզ խորհուրդներ տալ, թե ինչպես գումար խնայել ձեր վարձավճարների համար
- Մենք կարող ենք ձեզ տեղեկատվություն տրամադրել մատչելի ֆինանսական աջակցության մասին

Խորհուրդներ բողոքների լուծման համար

- Եթե ձեր ընկերության հետ խնդիր ունեք, դիմեք նրանց և բացատրեք ձեր իրավիճակը
- Դուք կարող եք ընկերոջը կամ ընտանիքի անդամին խնդրել նրանց հետ խոսել ձեր անունից
- Եթե թարգմանչի կարիք ունեք, տեղեկացրեք ձեր ընկերությանը
- Գրանցեք նամակները, ձեզ հետ զրուցած մարդկանց անունները, ժամերն ու ամսաթվերը
- Եթե հեռախոսազանգի կենտրոնի աշխատակիցները չեն կարող օգնել ձեզ, խնդրեք խոսել բարձրաստիճան աշխատակցի հետ
- Եթե խնդիրը դեռ լուծված չէ, կապվեք մեզ հետ

Ինչպես կապվել մեզ հետ

Դուք կարող եք խոսել մեզ հետ թարգմանչի միջոցով:

Զանգահարեք Թարգմանչական ծառայություն 131 450 հեռախոսահամարով և խնդրեք կապվել մեզ հետ

Կարող եք խնդրել ընկերոջը, ընտանիքի անդամին կամ համայնքի աշխատակցին մեզ հետ խոսել ձեր անունից

Անվճար զանգահարեք մեզ 1800 246 545 հեռախոսահամարով

(Եթե զանգահարում եք շարժական հեռախոսից, տեղեկացրեք մեզ և մենք ձեզ ետ կզանգահարենք)

Այցելեք մեր կայքը լրացուցիչ տեղեկատվության կամ առցանց բողոք ներկայացնելու համար

www.ewon.com.au